23.11

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"23" 11 2016 թ. N.02/11/5144-16

Ինֆորմացիայի Ազատության Կենտրոնի
ՀԿ նախագահ Լիանա Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 21.11.2016թ
թիվ 310-ի 7 *գրության*

Հարգելի տիկին Դոյդոյան

Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Է. Բաղդասարյանը՝ ՀՀ ՏԿԶՆ աշխատակազմի ղեկավարի 23.05.2016թ-ի N103-Ա հրամանով, որի կոնտակտային տվյալները տեղադրված են նախարարության պաշտոնական կայքում:

Վերոնշյալ հրամանի պատճենը կցվում է:

Հարգանքով՝

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Կատարող՝Գ.Սահակյան
Հեռ. 010-511-380

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

«13» 05 2016 թ. N 103-Ղ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 258-Ն որոշման 1-ին հավելվածի 49-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Է. Բաղդասարյանին:

2. Տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու անձի պարտականություններն են.

1) <<Տեղեկատվության ազատության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով տեղեկության տրամադրման կարգի, պայմանների և ձևերի մասին բացատրումը,

3) ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալների մշակումը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ